ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Նորակերտ, norakertgyux@mail.ru

«05» օգոստոսի 2019թ.

գ. Նորակերտ

թիվ 200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ղեկավարի կողմից ընդունած թիվ 66-68 որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատ. Վ. Դովլաթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> հուլիսի 2019թ. N 66

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Արայիկ Լյուդվիկի Ղազարյանի գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքով/ տրամադրելու վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 15-ին տրված թիվ 2 գրավոր առաջարկությունը և վերջինիս կողմից տրված համաձայնությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 04-074-0004-0077, սեփականության իրավունքի վկայական N12062019-04-0037, հողակադաստրային տարածագնահատման 9-րդ գոտու, Բարեկամության փողոց 6/5 հասցեում կառուցված 31.8քմ արտաքին մակերեսով շենք-շինությանը /ավտոտնակ՝ 31.8քմ,/ պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0,0059հա հողամասն /ուղղակի վաճառքով/ օտարել այդ շենք-շինությունը ինքնակամ կառուցող Արայիկ Լյուդվիկի Ղազարյանին:
2. Ավտոտնակի վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 1700 ՀՀ դրամ է՝ 31.8 x 1700 = 54060 ՀՀ դրամ:
   Շինությունների պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասն օտարել կադաստրային արժեքով: Մեկ հեկտարի կադաստրային արժեքը 19140000 ՀՀ դրամ է՝ 0,0059 x 19140000 = 112926 ՀՀ դրամ:

Ինքնակամ կառուցված շենք շինությունների և հողամասի օրինականացման հաշվարկված վճարները պետք է վճարվի՝ 54060 ՀՀ դրամը Նորակերտ համայնքի N900325181155 հաշվեհամարին, իսկ 112926 ՀՀ դրամը՝ N900325181130 հաշվեհամարին:

Վճարման ենթակա է ընդամենը 166986 ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ***ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ***

2019 թվականի հուլիսի 25
Նորակերտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> հուլիսի 2019թ. N 67

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով կառույցն իրականացրած անձի՝ Նորիկ Արշավիրի Միրանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքով/ տրամադրելու վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 15-ի տրված թիվ 1 գրավոր առաջարկությունը և վերջինիս կողմից տրված համաձայնությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 04-074-0004-0076, սեփականության իրավունքի վկայական N12062019-04-0034, հողակադաստրային տարածագնահատման 9-րդ գոտու, Բարեկամության փողոց 6/4 հասցեում կառուցված 28քմ արտաքին մակերեսով շենք-շինությունների /ավտոտնակ՝ 22.9քմ, պարիսպ՝ 0,5քմ, պարիսպ՝ 0,5քմ/ պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0,0057հա հողամասն ուղղակի վաճառքով օտարել այդ շենք-շինությունները ինքնակամ կառուցող Նորիկ Արշավիրի Միրանյանին:
2. Ավտոտնակի վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 1700 ՀՀ դրամ է՝ 22.9 x 1700 = 38930 ՀՀ դրամ:

   Պարսպի վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 1020 ՀՀ դրամ է՝ 1 x 1020 = 1020 ՀՀ դրամ:

Շինությունների պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասն օտարել կադաստրային արժեքով: Մեկ հեկտարի կադաստրային արժեքը 19140000 ՀՀ դրամ է՝ 0,0057 x 19140000 = 109098 ՀՀ դրամ:

Ինքնակամ կառուցված շենք շինությունների և հողամասի օրինականացման հաշվարկված վճարները պետք է վճարվի՝ 39950 ՀՀ դրամը Նորակերտ համայնքի N900325181155 հաշվեհամարին, իսկ 109098 ՀՀ դրամը՝ N900325181130 հաշվեհամարին:

Վճարման ենթակա է ընդամենը 149048 ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ***ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ***

2019 թվականի հուլիսի 25
Նորակերտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<01>> օգոստոսի 2019թ. N 68

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 31-ի թիվ 21 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող Երևանյան փողոց թիվ 4 հասցեում գտնվող 04-074-0127-0007 ծածկագրով 0,18հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանարապետության Կառավարությանն առընթեր ԱԳԿ ՊԿ աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:
1. Հողամասի նպատակային նշանակության վերաբերյալ փոփոխությունը պետական գրանցումն ստանալուց հետո, այն ընդգրկել համայնքի տարեկան ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ*

2019 թվականի օգոստոսի 01
Նորակերտ համայնք